—Դէ՛ գնա, ըսեց, Աստուած խըտ քըզի էղնի։

Ու Դաւիթ ուր ձին քշեց, գնաց. գնաց, տեսաւ, օր առջևանց մէկ թոզ ու տուման լէ կ'իգայ. էկաւ, օր Քեռի-Թորոսիկն է։

Ըսեց.—Շուն շան օրտի, պլէճկերի տղայ, մըկըր Սասուն ախ-չիկ չ'իկէ՞ր, օր դու էկար Կապուտկող մէկ ախչկայ աբով. գինաս էդի Պիրաբադն է, Խողբադի՞ն է, Մսրամելիքն է, Հնդայ ամիրէն է, Բաղդըդու խալիֆէն է ու քու մեծ ախպէրն է, ըսեց,—էդի Համզայ փահլեւան է, ըդոր ճըկըթի մատնիք կ'էղնի քըզի ձե-ռաց բլազուկ։

Ըսեց.—Քեռի-Թորոսիկ, էղեր ա բան ու պրծեր ա, պդի էր-թամ կռիւ, եա Աստուած ընձի կ'իտայ, եա Համզայ փահլեւանին։

Ու քշեց ձին. քշեց, հասաւ Համզայ փահլեւնի քաղքի վերև։

Քեռի-Թորոսիկ մնաց աղօթք էնելու։

Ձին թորկեց Քեռի-Թորոսկի կուշտ ու ինք գնաց քաղքի մէջ. գնաց ու հարցուց Համզայ փահլեւնի բոշկ ու սարէք։

Նշանց տուեցին։

Գնաց, մտաւ ի ներս. մտաւ ներս, տեսաւ, օր Համզայ փահ-լեւան նստուկ էր աթոռքի վրէն. գնաց բարև տուեց, բարև առաւ էն լէ։

Ու Համզայ փահլեւան հարցուց թէ՝—Ի՞նչ մարդ իս։

Թէ՝—Ես Խանդութ խանումի մարդն իմ։

Թէ՝—Ցո՞րի իս էկի։

Թէ՝—Էկեր իմ, ըսեց, մէկ նշանաբան մի տաս, տանիմ Խան-դութ խանումի համար։

Համզայ փահլեւան ճըկըթի մատնիք հանեց, թալեց թէ՝—Ա՛ռ, տար Խանդութ խանումի համար։

Դաւիթն առաւ, էցկեց, էլաւ, էկաւ յընթէ տակ։

Հանեց թալեց թէ՝—Ա՛ռ իդա, ի՞նչ էնիմ։

—Ըռա ի՞նչ կ'ուզիս, օր տամ տանիս Խանդութ խանումի համար նշանաբան։

Ըսեց.—Քու գլուխ կ'ուզիմ, օր տանիմ Խանդութ խանումի